

ՊԱՅՄԱՆՔ
Հարեկան գին և Պոլսոյ հար 8 ՄԷՃ.
» Գաւառաց 40 ՄԷՃ.
վեցամսեայ և Պոլսոյ 4 ՄԷՃ.
» Գաւառաց 5 ՄԷՃ.
Բարձրանիւր թերթի գին 60 փոյ.
Դանուշման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կրկայ:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ
Դուրս գացած լրագրաց հանդու-
ծաւքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մատիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած հա-
մակ չընդունուիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուստա 24 ապրիլ.
Հասարակաց խորհրդարանը 1874—
1875ի Հնդկական երումայի հաշուեցոյցն
ընդունեց, որոյ մէջ սովին պատճառու
հարկ եղած արտաքայ կարգի ծախքն
հաշուելով 11 1/2 միլիոն լիւր բաց կը
տեսնուի:

Բէշթա 24 ապրիլ.
Երեսփոխանաց ժողովին մէջ կառու-
վարութեան հարցուեցաւ թէ փարիզի
թան լրագրին մէջ հրատարակեալ Պ. Պայս-
թի նամակը վաւերական է: Եթէ վաւե-
րական է, աւոր մէջ յիշուած 1869ի Ա-
ւլստո—Գաղղիական դաշնադրութիւնը
պէտք է ժողովին ներկայանայ:

Պէրն 24 ապրիլ.
Կերականաց կողմէ գրգռեալ աղ-
մուկ և անկարգութիւնը տեղի ունեցան:

Լուստա 25 ապրիլ.
Այսօր հասարակաց խորհրդարանին
մէջ Պ. Տնօրէնի Սըր Զ. Թէրթիւրի
պատասխանելով բաւ թէ կառավարու-
թիւնը Սուլէյմի ջրանցքին խնդրոյն մէջ
բռնելիք աշխարհաւարութեան նկատմամբ
կը բանակցի միւս տէրութեանց հետ, եւ
երբոր որոշում մ'ըլլայ, խորհրդարանին
պիտի հայտնուի:

Լուստա 25 ապրիլ.
Անդրոյ մէջ յառաջիկայ հունձքն
ընդհանրապէս յաջող կերելի:
Կորչաքոթի իշխանն և Շուվարթի կոմ-
սարն ուղեկցի պիտի ըլլան կայսեր յառա-
ջիկայ մայիս ամսոյն մէջ Անգղիա ընելիք
ուղևորութեան:

Պէրն 25 ապրիլ.
Երեսփոխանական ժողովը վերջնա-
կան կերպիւ ընդունեց մամուլ եւ եկե-
ղեցականաց վրայ դրուած օրէնքները:

Սոփորոսի 25 ապրիլ.
Ռիսակոմութիւնը կը շարունակէ հան-
րապետականաց կողմէն: Քարլոսեանք չեն
պատասխաներ:

Փարիզ 25 ապրիլ.
Մնայուն յանձնաժողովոյ մէջ այսօր
հարցում ըլլալով կառավարութեան թէ
Սուլէյմի ջրանցքին խնդրոյն մէջ ինչ գործ
պիտի բռնէ, Պ. Տնօրէնի պատասխանեց
թէ խնդրը զիտանալ խառնակ նկատմամբ
խիստ ծանր է, և կառավարութիւնն ալ
ուշի ուշով կը խորհի անոր վրայ:

Բէշթա 25 ապրիլ.
Երեսփոխանաց ժողովը քաղաքային
ամուսնութիւնը պարտաւորեց ընելու վը-
րայ օրէնք մը ծրագրելու համար յանձ-
նաժողով մը կարգեց:

25 ապրիլ.
Սուլէյմի ջրանցքին խնդիրը կարգադ-
րուելու համար մէջ:

Պէրն 26 ապրիլ.
Երեսփոխանական ժողովն այսօր դոյ-
ուեցաւ:
Այս առթիւ կարգադրուած կայսերա-
կան հասին մէջ խաղաղութեան վերա-
բերեալ յայտարարութիւնները ջերմ ծա-
փահարութեամբ ընդունուեցան:

Լուստա 25 ապրիլ.
Ուր. Գոմ. 41 7/16
Փոխ. 1863 62 1/4
» 1869 50 1/8
» 1874 57 3/4
» 1872 68 3/4
Անգղ. Գոմ. 92 13/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ
Վեհ. Սուլթանը Տարի—Շուրայի
—Ա. քերէիլի ժողովին նախագահ վը-

սեմ: Մէհմետ փաշային առաջին կար-
գի և կայսերական Տիվանին առա-
ջին թարգման վսեմ. Սատուլահ
պէյին երկրորդ կարգի Օսմանիէ
պատուանշանն շնորհեց:

Բ. Դրան թարգմանատան անդամ
Եսուսէ Էֆէնտին Բօթիլի Օսմանեան
հիւպատոս անուանեցաւ:

Ռատիկանութեան նորընտիր նա-
խարար վսեմ. Հիւսնի փաշան կիրա-
կի օրը Կ. Պոլիս հասաւ, և իր պաշ-
տօնը վարել սկսաւ:

Հակահասունեան կաթողիկէ Հայք
անցեալ չորեքշաբթի օրը նորէն ա-
ղբարարի մատուցանելով Մեծ—Ե-
պարքոսին, Նորին բարձրութիւնն
հետեւեալ օրը երկու կուսակցութեանց
գլխաւորները կանչելով, միմեանց հետ
իրաւախոս ըլլալու համար հիմնա-
գիւր մը տուաւ անոնց, որոյ պայման-
ներն են կըսուի:

1. Կաթողիկէ Հայք այսուհետեւ
մէկ Պատրիարք մը պիտի ունենան
հոգեւոր և աշխարհական իրաւասու-
թեան տէր:

2. Հասարակութիւնը պատրիար-
քական երեք ընտրելուց ցանկ մը
պիտի ներկայացնէ կայսերական կա-
ռավարութեան, և նա ալ անոնցմէ
մէկը պատրիարք պիտի անուանէ:

3. Այս կերպիւ ընտրեալ Պատրի-
արքն՝ առաջնորդ մը կարգելու ժա-
մանակ երեք եպիսկոպոսաց կամ
վարդապետաց ցանկ մը պիտի ներ-
կայացնէ Բ. Դրան, և նա ալ անոնց-
մէ մին պիտի անուանէ:

4. Պատրիարքն և եպիսկոպոսնե-
րը (առաջնորդները) վեհ. Սուլթա-
նին և անոր կառավարութեան հա-
ւատարմամբ երգում պիտի տան:

5. Ազգային անշարժ սեփակա-
նութեանց հոգաբարձութիւնը Խիլա-
ֆի վերատեսչութեան ներքեւ պի-
տի գրուի:

Մեծ—Եպարքոսն ու թ. օր պայ-
մանաժամ տուեր է այս հինգ կէտե-
րուն վրայ խորհելու և վերջնական
պատասխան մ'իւրեն ներկայացնելու
համար:

Ուրբաթ օրը երկու կողման դը-
լեաւորները վսեմ. Միհրան պէյի տու-
նը դուստրուելով խորհուրդ և վի-
ճարանութիւն ըրեր են, բայց որո-
շում մը չեն կրցեր տալ:

Երէկ իրիկուն ալ Գալուստեան
Պետրոս Էֆէնտինն առանք պիտի գու-
մարուէին վերջնական որոշում մը տա-
լու համար:

Շաբաթ օրը հասարակաց կըր-
թութեան նախարար վսեմ. Սաֆ-
վէթ փաշային տարանքը սարսա-
փելի դէպք մը պատահեցաւ:

Յամը առաւուն երկուքին մի-
ջոցները կառք մը կերթաց կը կենաց

ապարանքին դրան առջև, և մէջէն
մարտը հողուած մարդ մ'իջնելով
կերթաւ կուսակալութեան նախկին
խորհրդական Տիվիթրաքի Արիսթար-
քի պէյին (որ Սաֆվէթ փաշային տու-
նը կը կենայ) տրուելու համար տուի
մ'իւր երկու նամակ կը յանձնէ սպա-
սաւորի մը, և կը ձգէ կերթայ:

Տիվիթրաքի պէյ այն դիշերը հոն
չգտնուելով, երբոր իրիկուն դէմ
հոն կերթայ, սպասաւորը տուին ու
նամակներն անոր կուտայ. ան ալ
սենեակ մը մտնելով, երբոր տուփը
բանալու կըլլայ, յանկարծ ահագին
պայթիւն մը կը լուսի: Ծառայները
կը վազեն սենեակը կը մտնեն և կը
տեսնեն որ Արիսթարքի պէյ դեռի-
նը փռուած էր, գլուխը, դէմքն ու
ձեռքերն այրած: Սենեակին դուռն
ու պատուհաններուն ապակիները
կտրտեր էին, և վարդապետներէն մէկ
քանին ալ բռնկիլ սկսած: Իսկոյն
կը մարեն հրդեհը, և Արիսթարքի
պէյն ալ վերջնելով Բէրա իւր տու-
նը կը տանին, ուր քանի մը բժիշկ-
ներ կը դարմանեն զայն:

Ռատիկանութիւնն այս սոսկալի
գործին հեղինակները գանելու կաշ-
խատի:

Գամակոսէն ապրիլ 4 թուով
դրուած նամակ մը կը ծանուցանէ թէ
քանի մը տարիէ ի վեր յիշեալ քաղա-
քըն հուղահարող 30 էն աւելի գո-
ղեր բռնուեր են, որոց դուրսը պատ-
կառելի ճէյի մ'է եղեր: Այս ձեռ-
բակալութեան պարագաները բաւա-
կան հետաքրքրաւոր են:

Գողթուն յանդգնութիւնն այն-
չափ մեծ և քաղաքին բնակիչներն
ալ այնչափ վարժուած են եղեր ա-
նոց դիշերային այցելութեանց, որ
տան մը մէջ վերի յարկէն վար իջնե-
լու ժամանակ սովորութիւն եղեր է
սանդուղին դիշէն դուրս, թէ «կին
(հարեմ) վար պիտի իջնէ, եթէ մարդ
կայ նէ երթայ»: Այս հրաւերը շատ
անգամ առաջ չեն եղեր. վարը
գտնուող գողթը քաղաքաւարու-
թեամբ կը մեկնին եղեր, վարի յար-
կին մէջ գտածինն միայն տանելով:

Սակայն անցեալ շաբաթ, կըսէ
նամակը, գողթուն մէկ այցելութիւ-
նը դէշ կերպիւ խառնուեցաւ: Մէյ յառա-
նի թաղը Ֆարահ անուն քրիստոնէի
մը տունը մտնելով, երբոր բրած կող-
պտանին մեծ տուփի մի մէջ դրած
մեկնելու վրայ էին, տանը բնակիչնե-
րէն կին մը պոռալ սկսաւ, և մօտե-
րը դառնող Տիվիթրաքի օգնութեան
հասնելով տանը դրանք մէջ գողթ-
ուն պատահեցան և քաղաքաւար ա-
նոց վրայ յարձակելով կուր բըռ-
նուեցան անոնց հետ: Բայց գողթը
շատուր ըլլալով, Տիվիթրաքը չկը-
ցան անոնց հետ գլուխ եղնի, և թող
տալու հարկադրեցան: Սակայն գողթ-
րէն մէկը կուռնին մէջ գուռ բռնե-
լու աղցան մը ձգած ըլլալով, հետեւ

եալ օրն այն գործիքը քաղաքին եր-
կաթագործներուն ցոյց տրուեցաւ
և անոնցմէ մին յայտնեց թէ այն
աղցանը Հիւսէյին — Էլ — Ֆա'ուրի
անուն Շէյխին համար շինած էր:
Այս յայտարարութիւնը դարմանը
պատճառեց, վասն զի այս Շէյխն
աղտուական տոհմէ ծնած անձ մ'էր,
և կըսուի թէ կուսական ալ մեծ
յարդ ու համարում ունէր վրան:
Սակայն սոսկականութեան դուրսը
պատասխանատուութիւնն իր վրայ
առնելով՝ քանի մը վիճաւորներ առաւ
և դնաց Շէյխին տունը կոխեց: Բազ-
մաթիւ դրօշակ և ուրիշ նշաններ, և
շատ ալ կողոպտաւ դուռն հոն: Գե-
րեղման մը տեսած, վրան կանոն
չուխայով ծածկուած և անարի կողմն
ալ վաթթոյ մը դրուած, որոյ հա-
մար Շէյխը կըսէր թէ իր նախնիք-
ներէն մէկուն գերեզմանն էր: Ռատի-
կանութեան գլուխը զայն քննելով
մէջէն շատ մը գողցուած ապրանք
գտաւ: Ասկէց 5—6 տարի առաջ կա-
թողիկէ—Յունաց Մայր եկեղեցիէն
գողցուած եկեղեցական դարդերն
ու զգեստներն ալ հոն էին: Շէյխն
և երկու որդիքը բանալու դուռն
և քանի մ'օր ետքն ալ ասոնց ըն-
կերներէն 30 հոգի բռնուեցան:

Վերջիշեալ նամակն ուրիշ հետա-
քըրքաւորութ լուր մ'ալ կուտայ:

«Ասկէց շաբաթ մ'առաջ, կըսէ,
հիւանդ ճանկուհի մը հոգեւոր վի-
ճակի մէջ կիցնայ: Իր երկու որդիքը
քովը նստած կուպին, մանաւանդ
մէկը շատ կակիճ կ'զգար: Յանկարծ
հոգեւորք կինն անոր դառնալով կը-
սէ. «Դուռն ինձ համար լալոյ պէտք
չունիս, վասն զի ես քու մայրը չեմ:
Յետոյ յայտնեց թէ Գամակոսի կու-
տրածին ժամանակ Ապի անուն քը-
րիստոնէի մը տունէն գտնելով ա-
ռեր մեծցուցեր էր զինքը իր որդ-
ւոյն պէս: Տղան մը 15 տարեկան էր,
այս բնուրն պէս վաղեց իր ծնողաց
տունը գնաց, որք դեռ ողջ էին: Ա-
սոնք, այսպիսի Ապի և իր կինը,
յիշեցին որ կուտրածին ժամանակ ի-
րենց արու դաւալը կորուսած էին,
բայց այս տղան իրենց դաւալն ըլ-
լալուն վրայ տարակուսեցան: Կաս-
կածի մէկ պատճառն ալ այս է որ
Ապի հարուստ է և արու ժառանգ-
չունի. սակայն կըսուի թէ տղան ալ
Ապիի պէս քիչ մը թրուաւորութիւն
ունի, և դէմքին գծապարտիւնն
ալ կը նմանի անոր: Ծնողքը համակ-
րութիւն չունին տղուն վրայ, վասն
զի կըսեն, կենցաղաւարտութեան կեր-
պերը խիստ տարբեր են իրենց կեր-
պերէն»

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԵ ՌՈՍՏՈՒՄԻԷ			
14 ապրիլ	Երկուշաբթի իրիկուն	46,	8
16 »	Երեքշաբթի առաւօտ	46.10	
		բացուեցաւ	46 2
		4 է օր	
Կ. Պոլիս 15 ապրիլ			
Սոսիթիէ մէկնելալի բաժինը Անդ. լիւր		3.28	
« Գալուստականութեան »		3.25	
Կ. Պոլսոյ Պանքային »		4.20	
Բիւլակի մէկնելալի »		7.14	
Բիւլակի Օսթրո—Թիւրք »		1 50	
Երկաթուղեաց հին		Յր.	410
»		»	72
Փոխ. 1863		»	314

ԼԱ. ԺԻՐՈՆՏ
 ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ, ԿԱՐԿՈՒՏԻ ԿԻ ԱՆԱՍՆՈՅ
 ԿՈՏՈՐԱՄԻ ԴԵՄ
 Կապաճողէ, տուներ, կարաւաններ, վաճառանոցներ, վաճառքներ
 եւայլն եւայլն, մինչեւ անգամ վաղաքէ չէնքեր հրդեհի դէմ, եւ անասնոց
 կոտորած ի դէմ, չափաւոր դնով եւ չահաւէտ պայմաններով թէ՛ Կ. Պօլսոյ
 եւ թէ Թուրքիոյ զլրաւոր քաղաքացի մէջ, միշտ մը պատահած ժամանակ,
 ստորագրեալն անկեղծպէս կը կտարարէ ճշդեւ եւ ուղղութեամբ բոլոր
 յոսնճի առած պայմանները,
 Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
 Բերհաւտար Զործախալ Թուրքացի համար
 ԱՂԻՔԱՆԱԴՐ ԲԵՐՄԷՁ Ի ՊԱՀԷԻ ԳԱՅՈՒՆ